

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Սույն Ընդհանուր Դրույթներ և Պայմանները կարգավորում է www.skizbup.com և www.skizbup.am դոմենային անվանումների ներքո համացանցային տիրույթում գտնվող կայքը (այսուհետ՝ **կայք**) ներկայացնող «Սկիզբ-ափ» ՍՊԸ-ի և կայքի օգտատիրոջ հարաբերությունները՝ ներառյալ Կայքից օգտվելու հետ կապված հարաբերությունները:

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.1. Սույն Ընդհանուր Դրույթներ և Պայմաններում օգտագործվող տերմիններն ունեն հետևյալ նշանակությունը.

- **ԸԴՊ**՝ սույն Ընդհանուր Դրույթներ և Պայմանները
- **Կայք**՝ համացանցային տիրույթի՝ www.skizbup.com և www.skizbup.am դոմենային անվանումների ներքո համացանցային տիրույթում գտնվող կայքէջ
- **Համակարգող**՝ կայքի բացառիկ իրավատեր հանդիսացող «Սկիզբ-ափ» ՍՊԸ
- **Օգտատեր**՝ ԸԴՊ-ին միացած անձ, որը հանդես է գալիս Ներդրողի կամ Սթարթափերի կարգավիճակով
- **Սթարթափեր**՝ որոշակի ոլորտի բիզնես նախագիծ ներկայացնող օգտատեր
- **Ներդրող**՝ որոշակի բիզնես նախագծում ներդրում կատարելու առաջարկ ներկայացնող օգտատեր
- **Ամփոփ նկարագիր**՝ բիզնես նախագծի հրապարակման ենթակա հատվածը (համառոտագրությունը), որը չպետք է գերազանցի 200 բառը
- **Բիզնես հարթակ**՝ Համապատասխան ծածկանվան ներքո Սթարթափերի բիզնես նախագծի համար Կայքում առանձնացված վիրտուալ տարածք, որում ներկայացվում է բիզնես նախագծի Ամփոփ նկարագիրը և որում առանձնվացած է հատուկ տարածք՝ տվյալ բիզնես նախագծում ներդրման առաջարկ ներկայացնելու համար
- **Ծածկանուն**՝ Համակարգողի կողմից Սթարթափերի բիզնես նախագծին տրված հրապարակային պայմանական անվանում, որն ուղղված է տվյալ բիզնես նախագիծը նույնականացնելուն
- **Հայտ**՝ ներդրողի կամ սթարթափերի կարգավիճակ ստանալու համար լրացվող դիմում
- **Հավաստման էջ**՝ ԸԴՊ-ի վերջին էջը, որը լրացնելով և ստորագրելով, օգտատերը հավաստում է իր կողմից ԸԴՊ-ին միանալը:



2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 2.1. Կայքի նկատմամբ բացառիկ իրավունքները պատկանում են համակարգողին:
- 2.2. Համակարգողն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոփոխել ԸԴՊ-ն՝ հաստատելով ԸԴՊ-ի նոր տարբերակը: Այն ուժի մեջ է մտնում կայքում հրապարակվելու օրվան հաջորդող 30-րդ օրը:
- 2.3. ԸԴՊ-ի նոր տարբերակի մասին Համակարգողն Օգտատիրոջը տեղեկացնում է նաև վերջինիս էլեկտրոնային փոստի միջոցով:
- 2.4. Մույն ԸԴՊ-ի փոխոխություններին (ԸԴՊ-ի նոր տարբերակին) համաձայն չլինելու դեպքում Օգտատերը պարտավոր է մինչ ԸԴՊ-ի նոր տարբերակի ուժի մեջ մտնելը այդ մասին հայտնել համակարգողին՝ info@skizbup.com էլեկտրոնային հասցեին նամակ ուղարկելով, այլապես օգտատերը կհամարվի համաձայնագրի նոր տարբերակին միացած:
- 2.5. Եթե Օգտատերը ԸԴՊ-ի 2.4. կետով սահմանված կարգով ծանուցում է Համակարգողին ԸԴՊ-ի նոր տարբերակին համաձայն չլինելու մասին, ապա Օգտատիրոջ և Համակարգողի միջև կնքված ԸԴՊ-ն համարվում է լուծված ԸԴՊ-ի նոր տարբերակի ուժի մեջ մտնելու օրվանից:
- 2.6. ԸԴՊ-ի գործող տեքստը տեղադրված է Կայքում:

3. ՍԹԱՐԹԱՓԵՐԸ

- 3.1. Օգտատերը, ԸԴՊ-ով սահմանված կարգով կայքից օգտվելով, կարող է ստանալ **Մթարթափերի** կարգավիճակ: Մթարթափերի կարգավիճակ ստանալն անվճար է:
- 3.2. Մթարթափերի կարգավիճակ ստանալու համար օգտատերը պետք է այցելի կայքի համապատասխան բաժինը, և ճշտությամբ և իրականությանը համապատասխանող տարբերակով մուտքագրի պահանջվող տվյալներն ու տեղեկատվությունը:
- 3.3. ԸԴՊ-ի 3.2. կետով նախատեսված գործողությունները կատարելուց հետո օգտատիրոջ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվում է պատասխան հավաստում, որը ներառում է **ԸԴՊ-ն և հայտը**:
- 3.4. Օգտատերը պետք է հետևի կայքի հրահանգներին, լրացնի և Համակարգողին ներկայացնի էլեկտրոնային փոստի միջոցով իրեն ուղարկված հայտը և հավաստաման էջը:
- 3.5. Համակարգողը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է հայտը և այն սահմանված պահանջներին և չափորոշիչներին համապատասխանելու դեպքում օգտատիրոջը տալիս **Մթարթափերի կարգավիճակ**՝ տրամադրելով վերջինիս բիզնես նախագծին տրված համապատասխան **ծածկանունը**:
- 3.6. Օգտատերը /Մթարթափերը/ մեկից ավելի բիզնես նախագծեր ներկայացնելու ցանկության դեպքում՝ յուրաքանչյուր բիզնես նախագծի համար պետք է լրացնի

առանձին հայտ՝ կրկնելով որպես Մթարթափեր գրանցվելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները:

- 3.7. Համակարգողը Մթարթափերի Ամփոփ նկարագիրը հրապարակում է կայքում՝ համապատասխան ծածկանվան ներքո:
- 3.8. Արգելվում է ներկայացնել այնպիսի տեղեկատվություն, որը չի հետապնդում կամ չի ենթադրում բիզնես նախագծի նկարագիր և պարունակում է որոշակի ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման կամ ապրանքների վաճառքի գովազդ:
- 3.9. Արգելվում է ներկայացնել բիզնես նախագիծ, որն ակնհայտ խախտում է օրենսդրությունը կամ այլ անձանց իրավունքները՝ այդ թվում ոտնահարում է այլոց հեղինակային իրավունքները:
- 3.10. Բիզնես հարթակում հրապարակման ենթական չեն Մթարթափերի կոնտակտային տվյալները, սոցիալական կայքերին կամ կազմակերպության կայքին արվող հղումները, ֆիրմային կամ ապրանքային նշանի անվանում կամ այլ տվյալներ, որոնք հուշում կհանդիսանան գտնելու համար սթարթափերին կամ նրա նախագիծը:

4. ՆԵՐՂՐՈՂԸ

- 4.1. Օգտատերը, ԸԴՊ-ով սահմանված կարգով կայքից օգտվելով, կարող է ստանալ **ներդրողի** կարգավիճակ: Ներդրողի կարգավիճակ ստանալն անվճար է:
- 4.2. Ներդրողի կարգավիճակ ստանալու համար օգտատերը պետք է այցելի կայքի համապատասխան բաժինը, ընտրի իրեն հետաքրքրող բիզնես նախագիծը և ներկայացնի իր ներդրման առաջարկը՝ համապատասխան բիզնես հարթակում: Պահանջվող տվյալները և տեղեկատվությունը պետք է մուտքագրել ճշտությամբ և իրականությանը համապատասխանող տարբերակով:
- 4.3. ԸԴՊ-ի 4.2. կետով նախատեսված գործողությունները կատարելուց հետո օգտատիրոջ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվում է պատասխան հավաստում, որը ներառում է **ԸԴՊ-ն** և **հայտը**:
- 4.4. Օգտատերը պետք է հետևի հրահանգներին, լրացնի և Համակարգողին ներկայացնի էլեկտրոնային փոստի միջոցով իրեն ուղարկված **հայտը և հավաստման էջը**:
- 4.5. Համակարգողը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է հայտը և այն սահմանված պահանջներին և չափորոշիչներին համապատասխանելու դեպքում օգտատիրոջը տալիս է **Ներդրողի կարգավիճակ**:
- 4.6. Օգտատերը /Ներդրողը/ մեկից ավելի բիզնես նախագծերում ներդրման առաջարկ ներկայացնելու ցանկության դեպքում՝ յուրաքանչյուր ներդրման առաջարկի համար պետք է լրացնի առանձին հայտ՝ կրկնելով որպես ներդրող գրանցվելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները:
- 4.7. Արգելվում է ներկայացնել այնպիսի տեղեկատվություն, որը չի հետապնդում կամ չի ենթադրում ներդրման առաջարկ և պարունակում է որոշակի ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման կամ ապրանքների վաճառքի գովազդ:

4.8. Արգելվում է ներկայացնել ներդրման առաջարկ, որն ակնհայտ խախտում է օրենսդրությունը կամ այլ անձանց իրավունքները՝ այդ թվում ոտնահարում է այլոց հեղինակային իրավունքները:

5. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾՍԿՑՈՒԹՅՈՒՆԸ

- 5.1.** ԸԴՊ-ի պահանջներին համապատասխան ներդրման առաջարկը ստանալուց հետո համակարգողը միջոցներ է ձեռնարկում ներդրողի հետ կապ հաստատելու, վերջինիս հետաքրքրող բիզնես նախագծի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու նպատակով և հետագա հնարավոր փոխհամագործակցության պայմանները քննարկելու համար:
- 5.2.** Ներդրողի և Սթարթափերի հետ նախնական համաձայնություն ձեռք բերելուց հետո Համակարգողը միջոցներ է ձեռնարկում Ներդրողի և Սթարթափերի հանդիպումը կազմակերպելու համար և աջակցում է վերջիններիս փոխհամագործակցության հարցում:
- 5.3.** ԸԴՊ-ի 5.1. և 5.2. կետերով նշված գործառույթներն իրականացնելու համար Համակարգողը և օգտատիրոջ/օգտատերերի հետ կնքում է համապատասխան պայմանագիր/պայմանագրեր, որի/որոնց պայմանները յուրաքանչյուր դեպքով կարող են տարբեր լինել:

6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 6.1. Համակարգողը պարտավոր է՝**
 - 6.1.1.** ԸԴՊ-ի շրջանակներում որևէ օգտատիրոջ նախապատվություն չտալ այլ օգտատիրոջ հանդեպ,
 - 6.1.2.** ԸԴՊ-ով սահմանված կարգով պահպանել համակարգողին հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունը,
 - 6.1.3.** ձեռնարկել ողջամիտ միջոցներ կայքը ժամանակակից տեխնիկական չափանիշներին համապատասխան արդիական պահելու, անխափան հասանելիությունը ապահովելու և հնարավոր ոչ օրինական ներգործուն միջոցներից զերծ պահելու համար,
 - 6.1.4.** չօգտագործել չբացահայտված տեղեկատվությունը և այն չտրամադրել երրորդ անձանց առանց օգտատիրոջ համաձայնության՝ բացառությամբ ԸԴՊ-ով նախատեսված դեպքերի:
- 6.2. Համակարգողն իրավունք ունի՝**
 - 6.2.1.** հայտի համապատասխանության ստուգման ընթացքում կապ հաստատել օգտատիրոջ հետ՝ ճշգրտումներ կատարելու կամ մանրամասներ հստակեցնելու նպատակով,
 - 6.2.2.** ստուգել օգտատիրոջ կողմից համակարգողին տրամադրված տեղեկատվությունը՝ ներառյալ դրա իսկությունը (այդ թվում՝ կոնտակտային տվյալներ, հեռախոսահամար և այլն),

- 6.2.3.** օգտագործել օգտատիրոջ անձնական տվյալները նրա հետ կապ հաստատելու համար,
- 6.2.4.** օգտատիրոջ հետ վերջինիս տրամադրած տվյալներով մեկ ամսվա ընթացքում կապ հաստատելու անհնարինության, դեպքում՝ հեռացնել օգտատիրոջ տվյալները,
- 6.2.5.** Օգտատիրոջ մուտքագրած տվյալների մեջ անճշտություն գտնելու դեպքում առաջարկել ուղղել անճշտությունները կամ չգրանցել տվյալ օգտատիրոջը,
- 6.2.6.** ժամանակավորապես (մեկ ամսվա ընթացքում՝ ոչ ավել քան երկու աշխատանքային օրով) դադարեցնել կայքի աշխատանքը՝ տեխնիկական կամ այլ թերությունների վերացման նպատակով,
- 6.2.7.** ցանկացած ժամանակ փոխել կայքի արտաքին ձևավորումը, կառուցվածքը, բովանդակությունը, ծառայությունների ցանկը, տեղադրել կայքում գովազդ,
- 6.2.8.** օգտատիրոջ կողմից ԸԴՊ-ի դրույթները խախտելու դեպքում՝ հեռացնել վերջինիս տվյալները,
- 6.2.9.** օգտատիրոջ հետ ԸԴՊ-ի լուծման դեպքում հեռացնել օգտատիրոջ տվյալները կայքից և իր տվյալների շտեմարանից,
- 6.2.10.** տրամադրել վճարովի ծառայություններ:

6.3. Օգտատերը պարտավոր է՝

- 6.3.1.** Խստորեն հետևել ԸԴՊ-ի դրույթների կատարմանը,
- 6.3.2.** Կայքում և համակարգողի կողմից պահանջվող բոլոր տվյալները ներկայացնել ճշգրիտ և իրականությանը համապատասխանող կարգով,
- 6.3.3.** չկատարել օրենքով և ԸԴՊ-ով արգելված այլ գործողություններ:

6.4. Օգտատերն իրավունք ունի՝

- 6.4.1.** ԸԴՊ-ով սահմանված կարգով օգտվել Կայքի ընձեռած հնարավորություններից,
- 6.4.2.** Կայքում հրապարակված և բոլորին հասանելի համարվող տեղեկատվությունը փոխելու և խմբագրելու համար դիմել համակարգողին,
- 6.4.3.** Ծանոթանալ Կայքում հասանելի տեղեկատվությանը,
- 6.4.4.** Պահանջել համակարգողից տրամադրել տեղեկանք-հավաստում տվյալ օգտատիրոջ կողմից կայքին տրամադրված տեղեկատվության՝ ներառյալ վերջինիս տրամադրման (կամ կայքում հրապարակված լինելու դեպքում՝ հրապարկման) ամսաթվի, վերաբերյալ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 7.1.** Կողմերը պատասխանատու են ԸԴՊ-ի խախտման համար:
- 7.2.** Համակարգողը պատասխանատու չէ ինտերնետ հասանելիության որակի, ինչպես նաև հոսթինգային ծառայության խափանման պարագայում կայքի խափանման համար, եթե խափանման տևողությունը չի գերազանցում անընդմեջ 2 (երկու) աշխատանքային օրը,

- 7.3. Համակարգողը պատասխանատու չէ այն խոչընդոտների և թերությունների համար, որոնք առաջացել են օգտատիրոջ կողմից տվյալների սխալ մուտքագրման հետևանքով,
- 7.4. Օգտատերը ամբողջ ծավալով պատասխանատու է կայքում իր կողմից լրացված, ինչպես նաև համակարգողին տրամադրված տեղեկատվության՝ այդ թվում դրանց ճշտության և իսկության համար,
- 7.5. Համակարգողը պատասխանատու չէ օգտատիրոջ /օգտատերերի/ կողմից տրամադրված տեղեկատվության ոչ հավաստի, թերի կամ անբարեխիղճ լինելու համար,
- 7.6. Համակարգողը պատասխանատու չէ օգտատերերի փոխհամագործակցությունը չկայանալու, ինչպես նաև բիզնես նախագծի կամ ներդրման առաջարկի ձախողման կամ չիրականացման կամ չիրագործման համար:
- 7.7. ԸԴՊ-ով սահմանված տեղեկատվության չբացահայտման պարտավորությունները խախտելու դեպքում խախտող կողմը պարտավոր է մյուս կողմին հատուցել պարտավորության խախտմամբ պատճառված իրական վնասները:

8. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԲԱՑԱՀԱՏՅՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ՉԲԱՑԱՀԱՏՅՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ)

- 8.1. Չբացահայտված տեղեկատվություն (գաղտնիք) է համարվում Օգտատիրոջ կողմից ցանկացած եղանակով Համակարգողին փոխանցված **անձնական տվյալները** (ներառյալ սակայն չսահմանափակվելով՝ անունը, ազգանունը, հայրանունը, սեռը, տարիքը, ծննդյան օրը, ամիսը տարեթիվը, անձնագրային տվյալները, հասցեները, հեռախոսահամարները, նկար/ներ/ը, օգտատիրոջ էլ. փոստի հասցեն), **հայտում լրացված տեղեկատվությունը, բիզնես նախագծի ամբողջական նկարագիրը (բացառությամբ այն ներդրողին ներկայացնելու դեպքի), ներդրման առաջարկի մանրամասն նկարագիրը և պայմանները:**
- 8.2. Սույն համաձայնագրի իմաստով Չբացահայտված տեղեկատվություն չի համարվում`
- 8.2.1. Ամփոփ նկարագիրը,
- 8.2.2. այն տեղեկատվությունը, որը նախապես օրինական կարգով հայտնի էր Համակարգողին մինչև Օգտատիրոջ կողմից դրանք համակարգողին տրամադրելը,
- 8.2.3. այն տեղեկատվությունը, որը հայտնի է դարձել հասարակությանը կամ դարձել է հանրամատչելի ոչ Համակարգողի միջոցով,
- 8.2.4. այն տեղեկատվությունը, որը Համակարգողն օրինական կարգով և առանց այն գաղտնի (կոնֆիդենցիալ) պահելու սահմանափակման ստացել է երրորդ անձից,
- 8.2.5. ԸԴՊ-ով սահմանված կարգով կայքում հրապարակման ենթակա տեղեկատվությունը, որը հասանելի է կայքի բոլոր այցելուներին:

- 8.3.** Համակարգողը պարտավորվում է չհրապարակել Չբացահայտված տեղեկատվությունը՝ առանց օգտատիրոջ հետ համաձայնեցնելու, բացառությամբ ԸԴՊ-ով նախատեսված դեպքերի:
- 8.4.** ԸԴՊ-ով Սթարթափերը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Համակարգողը տրամադրի Ներդրողին բիզնես նախագծի նկարագիրը, որի գաղտնիության պահպանման համար Ներդրողը կրում է նույն պարտավորությունները, որոնք սույն համաձայնագրով դրված են համակարգողի վրա:
- 8.5.** Համակարգողը երաշխավորում է միայն անմիջապես իրեն փոխանցված տեղեկատվության չբացահայտումը:
- 8.6.** Համակարգողն երաշխավորում է, որ Չբացահայտված տեղեկատվությունը գաղտնի պահելու և պահպանելու համար կձեռնարկի անհրաժեշտ բոլոր ողջամիտ քայլերը այդ թվում՝ բոլոր այն քայլերը, որոնք նա ձեռնարկում է պահպանելու համար սեփական նմանատիպ Չբացահայտված տեղեկատվությունը:
- 8.7.** Այն դեպքերում, երբ Համակարգողը պարտավոր կամ պարտադրված է պետական մարմիններին, դատական մարմիններին կամ իր կանոնադրությամբ սահմանված մարմիններին վերջիններիս պահանջով տրամադրել Չբացահայտված տեղեկատվությունը, ապա նա պարտավոր է մինչ նման տեղեկությունների տրամադրումը այդ մասին տեղյակ պահել Օգտատիրոջը և վերջինիս պահանջով ու հաշվին ողջամիտ ջանքեր գործադրել սահմանափակելու համար Չբացահայտված տեղեկատվության տրամադրումը՝ բացառությամբ այն դեպքերի երբ, օրենքով կամ այլ իրավական ակտերով կամ դատարանի որոշմամբ արգելված է նմանատիպ սահմանափակումը:
- 8.8.** Համակարգողը Պատասխանատու չէ Չբացահայտված տեղեկատվության բացահայտման համար, եթե դա եղել է՝
- 8.8.1.** Օգտատիրոջ անզգուշության հետևանքով,
 - 8.8.2.** Օգտատիրոջ կողմից իր անձնական տվյալները երրորդ անձանց հասանելի դարձնելու հետևանքով,
 - 8.8.3.** Օգտատիրոջ համակարգչի վիրուսային ծրագրերի ներգործման հետևանքով,
 - 8.8.4.** հաքերային հարձակման հետևանքով:
- 8.9.** Համակարգողն իրավունք ունի չբացահայտված տեղեկատվությունը պահպանել նաև ԸԴՊ-ի լուծվելուց հետո՝ պահպանելով չբացահայտված տեղեկատվության պահպանման ԸԴՊ-ով սահմանված կարգը:

9. ԸԴՊ-Ի ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

- 9.1.** ԸԴՊ-ն գործում է անորոշ ժամկետով:
- 9.2.** Օգտատերը ցանկացած պահի կարող է լուծել ԸԴՊ-ն՝ այդ մասին առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ էլեկտրոնային փոստի միջոցով համակարգողին ծանուցելով:
- 9.3.** Համակարգողը ցանկացած պահի կարող է լուծել ԸԴՊ-ն այդ մասին առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ էլեկտրոնային փոստի միջոցով Օգտատիրոջը ծանուցելով,

Եթե օգտատերը խախտել է ԸԴՊ-ի՝ ներառյալ վերջինիս անբաժանելի մասերի, դրույթները:

10. ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 10.1. ԸԴՊ-ի նկատմամբ կիրառվում է ՀՀ գործող օրենսդրությունը:
- 10.2. Կողմերի միջև ԸԴՊ-ի շուրջն առաջացած վեճերը լուծվում են կողմերի անմիջական բանակցությունների միջոցով՝ «ՍԿԻԶԲ-ԱՓ» ՍՊԸ-ի կամ վերջինիս ներկայացուցչի միջոցով: Տարաձայնությունները չլուծվելու կամ դրանց լուծման ուղղությամբ առաջընթաց չլինելու դեպքում այն ենթակա է լուծման՝ դատական կարգով՝ ՀՀ դատարաններում:

11. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՑԹՆԵՐ

- 11.1. ԸԴՊ-ն օգտատիրոջ և համակարգողի միջև կնքված է համարվում ԸԴՊ-ով սահմանված կարգով օգտատիրոջ կողմից ներդրողի կամ սթարթափերի կարգավիճակ ստանալու պահից:
- 11.2. ԸԴՊ-ն հանդես է գալիս որպես գրանցման հայտի և Կայքում ներկայացված ծառայությունների վերաբերյալ Կողմերի միջև ստորագրված ցանկացած այլ փաստաթղթ(եր)ի անբաժանելի մասը:
- 11.3. ԸԴՊ-ն կազմված է հայերեն լեզվով: ԸԴՊ-ի օտարաբաղեգու թարգմանությունները իրավական ուժ չունեն, եթե այդ թարգմանություններն իրականացված չեն համակարգողի կողմից և հրապարկված չեն կայքում: ԸԴՊ-ի հայերեն լեզվով տարբերակի և այլ լեզվով կամ լեզուներով տարբերակների տեքստերի միջև տարբերությունների, տարընկալումների դեպքում՝ գերակայում է հայերեն լեզվով տարբերակը:



12. ՀԱՎԱՍՏՄԱՆ ԷԶ

12.1. Սույնով հավաստման էջը ստորագրելով օգտատերը հավաստում է, որ ծանոթացել է www.skizbup.com և www.skizbup.am դոմենային անվանումների ներքո համացանցային տիրույթում գտնվող կայքի ԸԴՊ-ին և սույն հավաստման էջը ստորագրելով ընդունում է ԸԴՊ-ի բոլոր դրույթներն ու պայմանները:

Օգտատիրոջ անունը և ազգանունը՝
Հավաստման էջը լրացնելու ամսաթիվը (օրը, ամիսը, տարին)՝
Օգտատիրոջ ստորագրությունը՝